ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ ազգային ու եկեղեցական մեր կեանքում Ձեր իրագործումներին, որոնց մասին տեղեակ ենք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս Եպիսկոպոս Ներսիսեանից:

Արդարեւ գովելի է, որ Դուք մեր հայրենիքի հանդէպ անսուազ հաւատարմութեամբ ջանում էք օգտակարութիւն բերել մեր երկրի զօրացմանն ու առաջընթացին: Հայոց Արցախ աշխարհում Ձեր կողմից իրականացուած բարեսիրական ծրագրերը նպաստում են արցախահայութեան նոր՝ առաւել ապահով, բարօր ու բարգաւաճ գալիքի կառուցմանը:

Գովաբժան նոյն յանձնառութեամբ Դուք ծառայութիւններ էք մատուցում նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն՝ իրականացնելու Աստուծոյ Խօսքը ապրուածասէր մեր ժողովրդին մատուցելու փէրուսապատուէր առաքելութիւնը: Ուրախ ենք մեծապէս, որ Դուք մեծագումար նուիրատուութեամբ մասնակցութիւն բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը, որը երկար տարիների եռանդուն ջանքերից հետո դոներն է բացում հաւատացեալոց առջեւ: Տիրոջ կամքով այլեւս մշտահունչ պիտի լինի աղօթքը շքեղակառոյց եկեղեցում, ուր հաւատաւոր հոգիներից առ Բարձրեալն Աստուած բարձրացող մաղթանքներում երախտագիտութեամբ պիտի յիշուեն եկեղեցու բոլոր պատուաւոր բարերարներիդ անունները:

Ազգանուէր եւ եկեղեցաշէն Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով եւ թեմական Առաջնորդի խնդրանքին ընդառաջ, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք եւ հայցում, որ Ամենակալ Տէրը Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց հաւատաւոր անդամներին եւ հանապազ օրհ-

նութեամբ պարգեւի քաջառողջութիւն, արեւշատութիւն, առաքինի եւ ապրուածահաճոյ գործոց յարանոր յաջողութիւններ:

Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելո՛ւլ ձեզ յուսով՝ զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ (Հռոմ ԺԵ.13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 784